

ՀԱՅՈ

Իմ հայրիկը կացինն առել, գնում էր գոմ սարքելու: Իմ մայրիկը գոգնոցը կապել, գնում էր հանդ՝ կարտոֆիլ հավաքելու: Իմ հորեղբայրը եղանն ուսել, գնամ էր սարերում խոտ դիզելու: Բակում, արևի տակ, ես նստել էի կոճղին և հաց ուտելով կարդում էի քաջագործությունների մասին մի գիրք:

Օրը կիրակի էր: Դպրոցում հայերենից ես պայծառ «գերազանց»-ներ էի ստանում, ռուսերենից, մաթեմատիկայից, աշխարհագրությունից, բոլոր առարկաներից ես ստանում էի պայծառ «գերազանց»-ներ: Քաջագործությունների մասին գիրքը լավ գիրք էր: Իմ հայրիկը լավ հայրիկ էր: Իմ մայրիկը ինձ շատ էր սիրում: Իմ հորեղբայրը գեղեցիկ և ուժեղ տղամարդ էր: Մեր տան քիվի ծիծեռնակները երկնքի կռուկների հետ չվել գնացել էին: Այգու և անտառի վրա խշշալով աշուն էր իջնում: Եթե մեր խոզերը կորած չլինեին, այդ պահին աշխարհում ամեն ինչ անչափ գեղեցիկ կլիներ: Կացինը թևին, գոգնոցը կապած, եղանն ուսին՝ աշխատանքի գնալուց առաջ նրանք նայում էին ինձ և թաքուն հրճվում, որ իրենց որդին մեծանում է, այտն ահա ձեռքին է դրել և գիրք է կարդում: Գոգնոցը կապած, իմ մայրիկը մտածեց՝ ասե՛ղ թե չասել, և որոշեց չասել, որդուն չխանգարել, որդին թող կարդա ու դառնա գիտնական: Կացինը թևին, իմ հայրիկը մտածեց՝ խնդրե՛ղ թե չխնդրել: Դարձյալ մտածեց՝ խնդրե՛ղ թե չխնդրել, և որոշեց չխնդրել. որդին թող կարդա, հաց ուտելով թող կարդա: Ես կարդում էի և զգում, որ նրանք ուզում են խոզերի մասին ինձ բան ասել, բայց ես ցույց էի տալիս, թե ոչինչ չեմ զգում, այլ միայն կարդում եմ քաջագործությունների մասին գիրքը, քանի որ լավ է, շատ լավ է, երբ գրքերի մեջ ուրիշները գնում են, թրջվում են, մրսում են, կոպում են, պարտվում են, հաղթում են, և վատ է, անչափ վատ է, երբ ես ինքս եմ գնալու, հոգնելու, գտնելու կամ չգտնելու մեր խոզերը:

Գոմը պետք է անպայման սարքվեր, ձյուններից առաջ կարտոֆիլը պետք է անպայման հավաքվեր, խոտը պետք է

անպայման դիզվեր, ուրեմն հայրիկը, մայրիկը, հորեղբայրը չէին կարող չգնալ ձմեռվանից առաջ գոմը սարքելու, կարտոֆիլը հավաքելու, խոտը դիզելու: Եվ իմ հայրիկը ինձ ասաց.

- Եթե քեզ մի րան խնդրե՞մ:

Ես գիտեի, թե ինչ է խնդրելու հայրիկը, բայց հարցրի.

- Ի՞նչ խնդրես:

Եվ շատ մեծ ամոթ էր, որ գիտեր, սակայն չիմանալու էի տալիս նրա խնդրանքը:

- Մեր խոզերը Պարզ բացատում տեսնող է եղել,- ասաց իմ հայրիկը:

- Ո՞վ է տեսել,- հարցրի ես:

- Անտառապահը:

- Ե՞րբ է տեսել,- հարցրի ես:

- Երեկ իրիկուն:

Ես կարողացա չհարցնել՝ «ի՞նչո՞ւ է տեսել»: Ես հարցրի.

- Պարզ բացատը որտե՞ղ է:

- Դու կարծեմ լավ գիտես, թե որն է Պարզ բացատը:

- Էն հեռո՞ւն:

Նա չպատասխանեց, և ես հասկացա, որ նա ինձանից մի քիչ նեղանում է: Ես հարցրի.

- Ուզում ես գնամ գտնեմ բերե՞մ մեր խոզերը:

- Ես ոչինչ էլ չեմ ուզում,- ասաց նա:

- Մեր խոզերը Պարզ բացատում տեսնող է եղել, հետո՞,- ասացի ես:

Առանց աստասխանի նա շուռ եկավ գնալու:

- Լավ,- ասացի ես,- կգնամ: Բայց եթե էնտեղ չլինեն՝ ի՞նչ անեմ:

- Զգիտեմ:

Նա իրոք նեղանում էր, որովհետեւ ինքը չէր կարող փնտրելու գնալ, իսկ ես տալիս էի ալարկոտ անբանի հարցեր:

- Ներողություն,- ասաց նա,- գիրքդ կարդա, ներողություն:

- Լավ,- ասացի ես,- հետքերը կգտնեմ, հետքով էլ իրենց կգտնեմ:

Աշնան արևը մեղմորեն ջերմ էր: Աշնան մեղմ արևի մեջ գեղեցիկ էին ծիծեռնակների լուռ բները, այգու խնձորենիները, որոնք դեռ ունեին մի երկու խնձոր, իմ մայրիկի մեղմ ժպիտը, շիկավուն շանը, որ պառկել էր իմ ոտքերի մոտ ու ննջում էր, և աքաղաղի կարմիր կատա՞րը, և կեռասի ծառը, որ հանկարծ սկսեց ծվծվալ: Ես նայեցի այգուն, տեսա կեռասի ծառը և դեղնափորիկ թռչունին, որ այդքան ուշ աշունով ծառին կեռաս էր գտել և զարմանքից ծվծվում էր: Ես հասկացա, որ աշնան մեղմ արևի մեջ ամեն ինչ թախծոտ ու գեղեցիկ է և միակ տգեղը ես եմ, որովհետև ձևացնում եմ, թե գրքի պատճառով չեի ուզում մեր խոզերը փնտրելու գնալ:

Ես, ուրեմն, ասացի.

– Գիրքը խոզերի մոտ կկարդամ:

– Շնորհակալ կլինեմ,– ասաց իմ հայրիկը:– Ուզում ես՝ շունը թող մնա հավերին պահակ, ուզում ես՝ հետո տար: Շնորհակալություն,– կրկին ասաց նա, և ես մի քիչ ամաչեցի:

– Լավ,– ասացի ես,– շունը հետս կտանեմ:

Նրանք ինձ հագցրին բրդե տաք ու փափուկ սվիտեր, որ մայրիկն էր երեկոները գործել ինձ համար, հագնել տվին ռետինե սոսկերով թեթև կոշիկներ, որպեսզի կաշվե կոշիկներով խոտերի վրա հանկարծ չսայթաքեմ, և ինձ նայեցին գուրգուրանքով, քանի որ սվիտերն ինձ շատ էր սագում, և ես իրենց որդին էի:

– Յիմա՞ գնամ,– ասացի ես:

– Զո և հորեղբոր ճանապարհը մինչև Կույր աղբյուր նույնն է, հորեղբոր հետ մինչև Կույր աղբյուր գնա, Էնտեղից կթեքվես Թփուտ կածանով դեպի Պարզ բացատ:

Շունը չէր ուզում գալ: Ես նորից կանչեցի, նա դանդաղ ելավ ու ծուլորեն հետևեց մեզ: Նա ճանաչում էր Դիմաց անտառի գող ուրուրին, Դիմաց անտառի գող ուրուրը ճանաչում էր նրան: Նրանք վաղուցվա ծանոթներ էին: Դիմաց անտառի գող ուրուրը չէր ճախրում բազեի պես բաց ու բարձր, նա մեր հավերին մոտենում էր թփից թուփ և ծառից ծառ անցնելով, գրեթե սողալով: Շունը դարձյալ կանգ առավ: Ես տեսա գորշ ուրուրի գողունի թռիչքը թփուտից թփուտ, բայց մտածեցի, որ

շանը տանում եմ նույնքան կարևոր գործի, ինչքան կարևոր է հավերի հսկողությունը, և սուլոցով կանչեցի շանը: Նա մեր ետևից գալիս էր ականա, ապա, երբ գյուղից դուրս էինք եկել, և մոռացել էր ուրուրի մասին, ուրախ վնգստոցով առաջ սլացավ ու գնաց: Նա կարոտել էր անտառին, խոզերին, վագրին, հոգնածությամբ:

Տանը իմ գրասեղանն էր, լուսամտիցի ջերմ ու շոյող լույսը, իմ փոքրիկ գրադարանը, ռադիոյի մեղմ երգը և, իմ թախտին, ուղտի բրդից գործած հաստ շալը՝ ցերեկային նիքի համար: Անտառում արջերն էին, փղերը, վագրերը, հովազները, սատանաները, դևերը և հրեշները, մեր խոզերից և իմ ազնվությունից բացի, բոլորն էլ անտառում էին, և ես գնում էի դանդաղ, իմ հորեղբորից ետ մնալով: Ես բացել էի գիրքը և գնում էի գրքին նայելով, իբր թե չեմ կարողանում կտրվել գրքից և ետ եմ մնում կարդալու պատճառով:

Կույր աղբյուրի մոտ, որտեղ ճամփաբաժանն էր, շունը կանգնել էր և սպասում էր մեզ: Աղբյուրը Կույր էր կոչվում, որովհետև իր խորքերից նա մանրահատիկ ավազ էր հանում, ավազը փակում էր նրա ակը: Աղբյուրը դարձյալ լցվել էր մանրահատիկ ավազով ու տիղմով, փակ ակունքի ետևում, գետնի տակ աղբյուրը գուցե խեղդվում էր:

Իմ հորեղբայրը նայում էր արդեն ճահիճ դարձող աղբյուրին: Հանդի իր պայուսակից նա հանեց հանդի իր ուտելիքը, խաշած հավը կիսեց, փաթաթեց լավաշ հացի մեջ, այդ փաթեթը փաթաթեց թերթով և դրեց իմ թևի տակ: Եվ գլխով ցույց տվեց Պարզ բացատի կածանը:

– Ուզում եմ ջուր խմեմ, – ասացի ես:

– Պարզ բացատի աղբյուրից կիսմես, – ասաց նա, – մեծ կաղնու տակ է, գնացեք:

Ուրախ կլանչոցով շունը նետվեց դեպի կածան: Մի պահ ես էլ ուրախացա ու վազեցի: Խաշամը խշխշում էր խլացնելու չափ ուժգին ու չոր: Այդ խշխշոցն էր, երբ վազում էի՝ իմ ականջներում միայն այդ խշխշոցն էր: Խաշամը հասնում էր ծնկներիս: Երբ կանգ էի առնում՝ լուռ լռություն էր, այդ լռության ու լույսի մեջ հագիվ լսելի սվսվալով օրորվում էին

թափվող տերևները: Սև մոշահավը կհկոցոցվ թռավ իմ ոտքերի տակից, և դարձյալ խոր լռություն էր: Ինձ թվում էր, թե ես լսում եմ անտառի խաղաղ շնչառությունը:

Ես ետ նայեցի: Իմ հորեղբայրը ծնկել էր աղբյուրի մոտ և ինչ-որ բան էր անում: Մի քիչ էլ խորանալով անտառի մեջ՝ ես դարձյալ ետ նայեցի: Ինձ թվաց, թե հորեղբայրն արդեն գնացել է, բայց չէր գնացել, դեռ կռացած էր աղբյուրի վրա և դժվար էր նկատվում, քանի որ հողագույն էին և՛ ճանապարհը, և՛ նրա հագուստը: Ես նստեցի ծառի ետևը և, որպեսզի ինքս ինձ խաբեմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը: Գիրքը, սակայն, ես չէի կարդում, գրքի վրա կռացած՝ ես սպասում էի, թե իմ հորեղբայրը երբ է հեռանալու վերադարձի ճանապարհից: Նա հիմա նստել էր աղբյուրի մոտ, ծխում էր և, ինչպես ինձ էր թվում, նայում էր անտառի մեջ ինձ: ,Օրինակ՝ ինչո՞ւ ես եղպես պարապ նստել,- մտածեցի ես,- խոզ գտնելը ձեր գործն է, գիրք կարդալը՝ իմ. ես ահա կարդում եմ իմ գիրքը, իսկ դուք պարապ նստել եք: Եվ որպեսզի ինքս ինձ ավելի խաբեմ, ես ականջներս փակեցի մատներով ու նայեցի միայն գրքին: Իբր թե կարդում եմ, իբր թե միայն կարդում եմ:

Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ: Բայց ես չհասցրի վախենալ, որովհետև նույն պահին էլ տեսա մեր շանը: Նա թափով կպավ ինձ, ցատկեց, նորից ցատկեց, վնգստաց ու կանչեց դեպի Պարզ բացատ: Որպեսզի նա նորից չկլանչի ու խշխշացնի, ես իմ հացի կեսը տվեցի նրան, և նա ծառի ետևը ինձ մոտ նստեց ու սպասեց, թե էլ ինչ եմ տալու:

Հավի սպիտակ թել-թել մսերը ես կերա, ոսկորը տվեցի նրան: Վզի կաշին ես կերա, ոսկորը տվեցի նրան: Մի քիչ դժվար էր ուտվում, որովհետև ես չէի գնացել խոզերը փնտրելու, բայց ես ուտում էի: Հավի չտեսնված համով ոտը ես կերա, ոսկորը տվեցի շանը: - Ես էլ քեզ,- ասացի:

Աղբյուրի մոտ հիմա մարդ չկար: Ես կածանով իջա դետի ճանապարհ: - Գնացինք,- ասացի ես շանը: Նա նայում էր ինձ

և տեղից չէր ելնում, նա չէր հավատում, որ արդեն ետ ենք դառնում:

– Զո գործն է, – ասացի ես, – եթե ուզում ես մնալ՝ մնա:

Ես իջա ճանապարհ՝ աղբյուրի մոտ: Աղբյուրի ավազանում հիմա ցեխ ու տիղմ չկար, նրա ակը հիմա կույր չէր: Աղբյուրը հիմա բխում էր առատ ու ազատ, վարարությունից ուղղակի պարում էր: Նրա քարե կապույտ ավազանը լիքն ու պարզ էր: Նրա մաքուր հայելու մեջ ես տեսա իմ կուշտ ու հիմար դեմքը, ես ինձնից մի քիչ ամաչեցի, բայց շատ էի ծարավ, կռացա ջուր խմելու: Ես չհասցրի հասկանալ, որ այդ աղբյուրին ես արժանի չեմ՝ երբ արդեն ջուր էի խմում... Որ այդ աղբյուրը, որ հավի այդ միսը, որ այդ շունը, որ անտառի այդ խշռոցը, որ այդ հայրիկը, որ այդ մայրիկը, որ այդ բոլորը շատ լավն են, իսկ ես շատ վատը՝ դրա մասին ես չէի մտածում, ես կում առ կում խմում էի այդ ջինջ ջուրը: Ես ամենևին չէի մտածում, որ այդ աղբյուրը իմը չէ, ինձ չի պատկանում: Ես մի կուշտ խմեցի և գոհ էի:

Անտառից ես խոտոց լսեցի, դա կարծես թե խոզի ձայն էր, ես մի քիչ դարձյալ ամաչեցի, բայց շարունակեցի գնալ դետի տուն՝ դեպի իմ թախտը, իմ գրասեղանը, իմ տաքուկ անկյունը:

Երբ գյուղին բավական մոտեցել էի, տեսա, որ շունը դանդաղ գալիս է իմ ետևից:

– Չէիր ուզում՝ չգայիր, – ասացի ես շանը, – քեզ ո՞վ ստիպեց, քեզ ոչ ոք էլ չստիպեց:

Ուրուրը հավ գողացել էր թե չէր գողացել՝ ես չիմացա: «Հավերի հարցը մայրիկին է վերաբերում, թող մայրիկն էլ ստուգի՝ ուրուրը հավ թեցրել է թե չի թեցրել, – մտածեցի ես: – Աշխարհագրության իմ դասը գիտեմ, պատմության իմ դասը գիտեմ, մաթեմատիկայի իմ խնդիրը...»

Հայրիկը նստել էր թախտի եզրին և ժպտում ու տնքում էր: Նրա մեջքն, ուրեմն, նորից ցավում էր: Բայց թե ինչու էր ժպտում՝ ես չէի կարողանում հասկանալ:

– Էդ ռադիոն Էդ ի՞նչ է երգում, – հարցրեց նա:

- Կոմիտաս:

- Ինքը գրե՞լ է, թե ինքը երգում է:

- Ինքը գրել է, ինքը կոմպոզիտոր է:

Նա ժպտում էր, ապա ասաց.

- Ապրես, որ պատմությունն էդքան լավ ես սովորում:

- Ո՞վ ասաց:

- Ուսուցիչները եկել, ինձ օգնում էին: Վաղվա դասերդ գիտե՞ս:

- Գիտեմ:

- Շնորհակալություն,- ասաց նա:- Էդ ոչինչ, որ խոզերը չես գտել, ես հիմա կգնամ կրերեմ:

- Հիմա մութ է,- ասացի ես:

- Գելը երեկ գիշեր Մուշեղի խոզերն անտառում ջարդել է, վախենում եմ մերոնց էլ վնասի:

Նա ամեն վայրկյան ուզում էր թախտից ելնել և չէր ելնում: Նա չէր ուզում թիկնել, բայց, ի վերջո թիկնեց:

- Որ պառկում եմ՝ չի ցավում,- ասաց նա:- Միայն Պա՞րզ բացատը նայեցիր, թե ուրիշ տեղեր էլ փնտրեցիր:

- Պարզ բացատը նայել եմ,- ասացի ես:

- Ուրեմն, էլ Պարզ բացատ չեմ գնա,- ասաց նա,- ափսոս, ես հույս ունեի, թե էնտեղ կլինեն:

- Չգիտեմ,- ասացի ես,- կա՞ծանը խաշամով ծածկված էր, իմ նայածը չգիտեմ Պա՞րզ բացատն էր, թե մի ուրիշ բացատ:

- Բացատի եզրին մի մեծ կաղնի՞ կար:

- Մի մեծ կաղնի կար, կաղնու տակ մի աղբյուր կար,- ասացի ես:

Ցավից ծամածռվելով նա ելավ միանգամից և փնտրեց գլխարկը: Նա այնքան էր հոգնած, որ չէր հասկանում, որ գլխարկը ձեռքին է:

- Ափսոս, որ Պարզ բացատում չեն եղել,- ասաց նա,- ուրեմն հեռացել, հասել են խոր բացատ:

- Զո մեջքը ցավում է,- ասացի ես:

Նա ծաղրեց իր ցավը.

- Որ մթան մեջ աչքդ լարում ես՝ ցավը մոռացվում է:

- Ես քեզ հետ գալիս եմ,- ասացի ես:

Նա ինձ շոյեց.

- Դու էսօր շատ ես ման եկել, հաց կեր, մի քիչ հանգստացիր ու քնիր:

Երբ նա թաղվում էր մթան մեջ, ես բարձր ասացի.

- Ես էլ եմ գալիս:

- Ո՛չ, - կտրուկ ասաց նա, - դու գիրքդ կարդա:

Մթան մեջ՝ հաչոցով ու փափուկ թափով մի բան անցավ. շունն էր, գնում էր իմ հայրիկի հետ փնտրելու, հեռու անհայտություններում գտնելու, բերելու մեր խոզերը, որոնց միսը ամբողջ ձմեռ ես պետք է ուտեի, որոնց գնով ես պետք է հագնեի տաք վերարկու, ունենայի դահուկներ, դահուկային կոշիկներ, փափուկ վզնոց, ականջակալ գլխարկ...

Մայրիկը ընթրիքի սեղան էր փռում: Ռադիոն կամացուկ երգում էր: Գրասեղանին շոյիչ կաթնալույս էր մաղում լուսամփոփը: Սպիտակ սփռոցին մարմրում էր լավ թխած սպիտակ հացը: Հացի կողքին՝ կարմիր տապակած կարտոֆիլը: Կարծ բոցերով վառվում էր օջախի փայտը: Թեյամանը մեղմ չիսկչիսկում էր: Եվ թեյի արծաթե գդալն էր շատ գեղեցիկ, և ընկույզի դարչնագույն մուրաբա՞ն, որ փայլվում էր կաթնալույսի մեջ, և գիշերն էր թավ ու տաք, և տխուր էր միայնակ ծղրիդի ընդհատ երգը, որ լսվում էր երբեմն սեղանի մոտից, երբեմն՝ օջախի, երբեմն՝ իմ թախտի: Այդ բոլորը տխուր ու գեղեցիկ էին և ստեղծված էին ինձ համար, բայց ես արժանի չէի դրանք ուտելու, դրանք զգալու, դրանց նայելու, դրանք լսելու:

- Ես հաց չեմ ուտում, - ասացի ես, մտա անկողին և շուռ եկա դեպի պատը: Եվ բրդի ու փետուրի փափկությունն էր ափսոս, և անկողնի ճերմակ մաքրությունը: Մայրս մոտենում էր, ես աչքերս փակեցի: Նա ծածկեց իմ մեջքը և մրմնջաց.

- Երեխաս էսօր շատ է չարչարվել: